

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴՎՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՆԴԵՍՐԱԿԻ՝ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԲԱՆԱԶԵԿԻ ԶՆՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ա. Վ. ԽԱՀՏԱՌՈՒՅԱՆ

Գերմանիայի Դաշնային Հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմնի՝ Բունդեսբազի կողմից Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունումը պատմաքաղաքական, միջազգային-իրավական առումով կարևորագույն վավերագիր է, որի արդիականությունը և հրատապությունը կասկածից վեր է: Այն մեկ անգամ ևս վկայեց թուրքական ներկայիս դիվանագիտության սնանկությունը, քանզի վերջինս, ամեն կերպ գործի դնելով դիվանագիտական զինանոցում ունեցած կեղտոտ հնարքները, քողարկված թե անթաքույց ճիզեր է գործադրում ժխտելու այն ոճրագործությունը, որը պարզապես անհերքելի է: Պատմական բանաձևի ընդունումը մեկ անգամ ևս ապացուցեց, որ տարբեր երկրների՝ պաշտոնապես դատապարտող որոշումների ընդունման գործընթացը կասեցնելու թուրքական դիվանագիտության փորձերն ապարդյուն են: Ամերկբա է ԳԴՀ Բունդեսբազի Հայոց ցեղասպանության բանաձևի միջազգային-իրավական մեծ նշանակությունը, քանզի այն դուրս է գալիս զուտ հայ-գերմանական ու թուրք-գերմանական միջպետական հարաբերությունների շրջանակներից և ստանում է համաեվրոպական հնչելություն: Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես դատապարտեց Եվրոպայի ամենաազդեցիկ, հզոր, բարձր կենսամակարդակ ունեցող երկիրը, որի հետ Առաջին աշխարհամարտի տարիներին դաշնակցում էր Օսմանյան ցեղասպան կայսրությունը:

ԳԴՀ Բունդեսբազի բանաձևի պաշտոնական ընդունումը, իհարկե, միանգամայն օրինաչափ էր. այն պայմանավորված էր միջազգային-իրավական, պատմաքաղաքական գործոններով: Նախ՝ Հայոց ցեղասպանության ճանաչման կողմնակիցները, որոնց մեջ էին հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, պետական այրեր, Բունդեսբազի պատգամավորներ, հանրաճանաչ գիտնականներ, մտավորականներ, քաջատեղյակ էին, որ դեռ 1915-1916թթ. ցեղասպանության ժամանակ Գերմանիայում հայտնի հասարակական գործիչներ Յ. Լեփսիուսը¹, Ա. Վեզները, Պ. Ռոբբախը, Յ. Մարկվարտը և այլք², բողոքի հզոր ձայն էին բարձրացրել երիտթուրքական ոճրագործների դեմ: Թեև պատերազմի տարիներին Գերմանիայում հաստատված էր խիստ զրաքննություն և, փաստորեն, արգելված էր այս հիմնահարցի արծարծումը, այնուհանդերձ գերմանական հասարակայնությունից քաջցնել այդ հանցագործությունը անհնարին էր, քանզի կասկածից վեր էր կայսերական Գերմանիայի մեղակցությունը Հայոց ցեղասպանության մեջ, թեկուզև այն հանդուրժելու, էլ չենք ասում երիտթուրքական ոճրագործությունը չկանխելու առումով: Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևի նախաձեռնողները և կողմնակիցները, Բունդեսբազում լսումներ կազմակերպող ազդեցիկ գործիչները քաջատեղյակ էին պաշտոնական գրագրություններին, մասնավորապես Օսմանյան Թուրքիայում Գերմանիայի դեսպանի զեկուցագրերին, Գերմանիայի կառավարող շրջանների, առաջին հերթին արտգործնախարարության

¹ Տե՛ս „Deutschland, Armenien und die Türkei 1895-1925, Dokumente und Zeitschriften aus dem Dr. Johannes-Lepsius-Archiv“, zusammengestellt und bearbeitet von Hermann Goltz und Axel Meissner K.G. Saur, München 1998, seite XXVIII 622, տե՛ս նաև՝ Ա. Ն. Հայրունի, Յոհաննես Լեփսիուս, հայանվոր գործիչն ու հրապարակախոսը, Եր., 2001, էջ 136:

² Տե՛ս „Германские источники о геноциде армян. Период Первой мировой войны“, т. I, под ред. проф. С.С. Степаняна, Ер., 1991:

բարձրաստիճան այրերի պաշտոնական հրահանգներին³, որոնց միջոցով հնարավորություն էր ընձեռնվում հստակ պատկերացնելու արևմտահայության նկատմամբ Գերմանիայի դրսևորած քաղաքական վարքագիծը և կեցվածքն Առաջին աշխարհամարտի տարիներին: Իսկ այդ պաշտոնական վավերագրերը վկայում են Գերմանիայի, մեղմ ասած, մեղսակցությունը Մեծ եղեռնին: Հետևաբար, այս ամենը ոչ միայն համոզեց բանաձևը ընդունողներին ցեղասպանության եղելության մեջ, այլև փաստեց այդ ոճրագործությունը դատապարտելու անհրաժեշտությունը: Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի նախաձեռնողները քաջատեղյակ էին, որ աշխարհի շատ երկրներում շարունակվում է Հայոց ցեղասպանության ճանաչման վերընթացը՝ ընդլայնելով քաղաքական աշխարհագրությունը, ընդգրկելով նորանոր երկրներ: Այդ տերությունների բարձրագույն մարմինների դատապարտող որոշումներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում էին գերմանական հասարակայնության վրա, հարկադրում՝ նորովի գնահատելու Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի դեմ ձեռնարկված ոճրագործությունները: Նախորդ փուլում Գերմանիայում հիմնահարցի անտեսմամբ պարզապես փորձեր էր արվում «սպանել» այն կամ էլ մեղմացուցիչ համզամանքներ «փնտրել», որոնք էին պատերազմի տարիների համար բնորոշ գործող անողոք «օրենքները», արևմտահայության ռուսամետությունը, անգամ Ռուսաստանի քաղաքականության ձեռքին գործիք լինելու հանգամանքը, որոնք վերջին հաշվով նպատակ ունեին եթե ոչ արդարացնելու ցեղասպան պետության հանցագործ քաղաքականությունը, ապա զոնն քաջցնելու Գերմանիայի մեղսակցությունը: Բայց միջազգային քաղաքական գործընթացները, նոր մտածողությունն ու մոտեցումներն ու հատկապես ժամանակակից թուրքիայի կեցվածքը, որը հեռու է ժողովրդավարական սկզբունքներից, նպաստեցին, որ Հայոց ցեղասպանության ճանաչման օգտին Գերմանիայում գործող ազդեցիկ ուժերը դիմեն ավելի հետևողական ու վճռական քայլերի՝ Բունդեսբազում այն օրակարգի հարց դարձնելու, նման բանաձև մտցնելու և, վերջապես, ընդունելու համար: Այս առնչությամբ հատկապես մեծ աշխատանք ծավալեցին մի շարք գիտահետազոտական կենտրոններ և հաստատություններ, ինչպիսիք են Մյունխենի Հայկական հարցերի հաստատությունը⁴, Բոխումի Ռուր համալսարանին կից Սփյուռքի և ցեղասպանության հարցերի հետազոտության ինստիտուտը⁵, Հալլե-Վիտենբերգի Մարտին Լյութեր համալսարանի Լոյկրեա հիմնադրամին կից «Մեսրոպ» հայագիտական⁶, Բեռլինի Հայկական տեղեկատվական և փաստագրական կենտրոնները⁷ և ուրիշներ:

Հանովերում ակտիվ գործունեություն էր ծավալում Բաֆֆի Կանտյանի գլխավորած գերմանա-հայկական ընկերությունը, որի աշխատանքներին մասնակցում էին գերմանացի գիտնականներ, քաղաքագետներ, իրավաբաններ, հասարակագետներ:

Բեռլինում գործող «Հայկական փաստագրական կենտրոնը» հայագիտության ու սոցիոլոգիայի գերմանացի հայտնի գիտնական Թեսսա Հոֆմանի գլխավորությամբ ակտիվ

³ St' u "Die Armenische Frage und der Genozid an der Armeniern in der Türkei (1913-1919), Dokumente aus dem Politischen Archiv des Deutschen Auswärtigen AMTS", Zusammengestellt und Eingeleitet von prof.dr. Wardges Mikaelyan, Yerevan, 2004:

⁴ St' u "The Armenian Genocide, Dokumentation", "Institut für Armenische Fragen", Band 1,2,8, München, 1987-1988, 1991:

⁵ St' u "Genozid und Moderne, Strukturen kollektiver Gewalt im 20. Jahrhundert", Herausgegeben von Mihran Dabag und Kristin Platt, Band 1, Leske+Budrich, Opladen, 1998, ինչպես նաև՝ "Generation und Gedächtnis, Erinnerungen und Kollektive Identitäten", Herausgegeben von Kristin Platt und Mihran Dabag unter Mitwirkung von Susanne Heil, Leske+Budrich, Opladen, 1995:

⁶ St' u Wolfgang Gust, Der Völkermord an den Armeniern, Die Tragödie des ältesten Christenvolks der Welt, Carl Hanser Verlag, München-Wien, 1993:

⁷ St' u Tessa Hofmann, Der türkische Völkermord an den Armeniern 1915/16: Hintergründe, Verlauf und Auswirkungen, Beiträge über Armenische Geschichte, Evangelisches Bildungswerk, B., 1986:

աշխատանք էր ծավալում Գերմանիայում ցեղասպանությունը ճանաչելու ուղղությամբ*:

Բունդեսբազում այս բանաձևի ընդունման գործում նկատելի էր Գերմանիայում հայ համայնքի աշխատանքը: Ընդհանրապես Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ օտար երկրներում հանգրվանած հայկական համայնքների առկայությունը կարևոր գործոն է: Նրանք վայելում են պետությունների բարյացակամ վերաբերմունքը: Դա բնորոշ է նաև Գերմանիային, որտեղ կա հայկական փոքր և գործունյա համայնք: Ըիշտ է, այն չի կարող իր ազդեցիկությամբ ու հատկապես ֆինանսական միջոցներով համեմատվել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Մերձավոր Արևելքի երկրների հայ համայնքների հետ, այնուամենայնիվ իր նպաստը բերեց Գերմանիայում տեղի ունեցող գործընթացներին և համեստ ուժերով օգնեց, որ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը ոչ միայն մտնի Բունդեսբազի օրակարգ, այլև ընդունվի Մեծ եղեռնը դատապարտող որոշում:

Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունման գործում վճռորոշ նշանակություն ունեցավ նաև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ԳՂՀ-ի և ՀՀ-ի միջև:

Վերամիավորված Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը՝ առաջիններից էր, որ ճանաչեց Հայաստանի երրորդ Հանրապետության անկախությունը (1991թ. դեկտեմբերին), իսկ արդեն 1992թ. հունվար ամսին երկու երկրների միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ:

Այս տեսանկյունից առանձնապես կարևորվում են ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի զգլխավորած պատվիրակության այցերը ԳՂՀ (2003թ. հունվար և 2004թ. նոյեմբեր) և հանդիպումները ամենաբարձր մակարդակներով: Կարևոր նշանակություն ունեցան ՀՀ արտգործնախարարի պաշտոնական և աշխատանքային այցերը Գերմանիա, ինչպես նաև դիվանագիտական խողովակներով երկկողմանի այլ հանդիպումները Գերմանիայի բարձրաստիճան աշխարհի հետ: Որոշակի էր նաև Գերմանիայում ՀՀ դեսպանատան նպատակասլաց աշխատանքը Հայոց ցեղասպանության ճանաչման գործում: Հատկանշական է, որ ՄԱԿ-ում ՀՀ-ի ներկայացուցիչը պաշտպանում է Գերմանիայի թեկնածությունը ՄԱԿ-ի Ան մշտական անդամության հարցում:

ԽՍՀՄ-ի փլուզումն էապես փոխեց ուժերի հարաբերակցությունը միջազգային սպարեզում, համաեվրոպական մասշտաբով վերափոխվեց մայրցամաքի քաղաքական քարտեզը: ԽՍՀՄ փլուզման գործընթացը գերմանական երկու պետություններին հնարավորություն ընձեռեց վերստին միավորվելու: Հայ ժողովուրդը, ինարկե, պետք է ողջուներ գերմանական ժողովրդի կյանքում տեղի ունեցած պատմաքաղաքական այդ խոշորագույն իրադարձությունը:

Բունդեսբազում նման բանաձևի ընդունմամբ Գերմանիան փորձում է թոթափել իր մեղսակցության ծանր բեռը, որի մասին տեղյակ էին ոչ միայն սույն կարևորագույն փաստաթղթի նախածեռնողները և հեղինակները, այլև համաշխարհային հանրությունը և հատկապես Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչած ու դատապարտած երկրները:

Անշուշտ, նման լուրջ և սկզբունքային նշանակություն ունեցող բանաձևի ընդունումը Բունդեսբազում չէր կարող կատարվել միանգամից, առաջին ընթերցմամբ, մանավանդ որ Մեծ եղեռնը ճանաչող և դատապարտող երկրների (ՌԴ, Ֆրանսիա, Հունաստան և այլ) բարձրագույն պետական մարմիններն այդպիսի որոշումներ են կայացրել պատվամենտական երկարատև բանավեճերից, պատմական փաստերը համադրելուց, բանաձևերում ուղղումներ մտցնելուց հետո: Դեռևս 2000թ. նոյեմբերին մի շարք կազմակերպություններ՝

* St' u Tessa Hofman, Historiographie, Genozid und seine internationale Anerkennung, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», գլխ. խմբ. է. Գ. Դանելյան, Եր., 2002/6, էջ 61-71, Թեսսա Հոֆման, Մենք գերմանացիներս և Հայոց ցեղասպանությունը, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», գլխ. խմբ. է. Գ. Դանելյան, Եր., 2003/8, էջ 169-172, ինչպես նաև՝ Armenisch-Deutsche Korrespondenz (ADK), Herausgeber Raffi Kantian, № 108, Heft 2 Jg. 2000, s. 18:

՝ Այդ մասին տե՛ս Խաղեմ Շուլցե, Краткая история Германии, пер. с нем., М., 2004, էջ 226-235:

Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը, «Հայկական» տեղեկատվական և փաստագրական կենտրոնը Բեռլինում, Հայկական հարցերի հաստատությունը Մյունխենում, Վտանգված ազգերի կազմակերպության «Հայաստան» համակարգող խումբը և ցեղասպանության հակառակորդների միությունը Մայնի Ֆրանկֆուրտում հավաքեցին ավելի քան 10 000 ստորագրություն և համատեղ կազմված հավելված-հայցադիմում ներկայացրին Բունդեսբաձ` քննարկելու Հայոց ցեղասպանության խնդիրը: Այսպիսով, հիմնականում այս հինգ կազմակերպությունները հանդես եկան Հայոց ցեղասպանության հիմնահարցը Բունդեսբաձում քննարկելու նախաձեռնողների դերում:

Առաջին անգամ ԳԳՀ Բունդեսբաձում ներկայացված Հայոց ցեղասպանությունը դատապարտող պաշտոնական փաստաթուղթը քննարկվեց հայցադիմումների հանձնաժողովի 2001թ. ապրիլի 4-ի նիստում: Այնուհետև հանձնաժողովին ներկայացված հայցադիմումի տեքստը, փաստարկների փաթեթը և Բունդեսբաձի կողմից տրված ուղեկցող մամակը` որպես որոշում հայցադիմումների հանձնաժողովի նախագահ Հայդեմարի Լյութի ստորագրությամբ փոխանցվեց ԳԳՀ արտգործնախարարություն` կառավարության կարծիքը ստանալու նպատակով: Միաժամանակ որոշում կայացվեց հայցադիմումին վերստին անդրադարձնել վեցամսյա ժամկետում` արտգործնախարարությանը տրամադրած նյութերի վերաբերյալ Դաշնային կառավարության պատասխանը քննարկելու համար:

2001թ. հուլիսի կեսերին ԳԳՀ արտաքին գործերի նախարարությունն ի պատասխան հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, ուր ասված էր, որ դեռևս հունիս ամսին ԳԳՀ արտաքին գործերի գերատեսչությունը պետական քարտուղարի մակարդակով զբաղվել է հայցադիմումի (պետիցիայի) հարցով: Հունիս ամսին ԳԳՀ ԱԳՆ-ն այս խնդրի վրա է հրավիրել Թուրքիայի ԱԳ նախարարության ուշադրությունը և նրանից պաշտոնական պատասխան ստացել այն մասին, որ հարցի ցանկացած քննարկում օտար խորհրդարաններում կարող է խոչընդոտել հայ-թուրքական հարաբերություններին: Թուրքական կողմի խնդրանքն էր, հաշվի առնելով հարցի կարևորությունը, նրա քննարկման անդրադարձներում հանդես բերել մեծազույմ շրջահայացություն:

Թուրքական դիվանագիտության հետապնդած նպատակը կոահել այդքան էլ դժվար չէր. հայ-թուրքական հարաբերությունների հետագա զարգացման պատրվակով փորձեր էին արվում կասեցնելու Հայոց ցեղասպանության հիմնախնդրի հնարավոր քննարկումը Բունդեսբաձում, առավել ևս երիտթուրքական ոճրագործությունները պաշտոնապես դատապարտող բանաձևի ընդունումը: Թուրքիան գտնում էր, որ եթե այս հարցը քննարկվի Բունդեսբաձում, ապա զգալիորեն կբարդանան թուրք-գերմանական միջպետական առընչությունները: Հայտնի է, թե որքան ցավազին, եթե չասենք թշնամաբար է ընդունում Թուրքիան այն երկրների քաղաքականությունը, որոնք ոչ միայն ճանաչում են ու դատապարտում Օսմանյան կայսրությունում իրագործված Մեծ եղեռնը, այլև բարեկամական քաղաքական դիրքորոշում ունեն ՀՀ-ի նկատմամբ:

Այս ամենից հետո հայցադիմումների հանձնաժողովը, փաստորեն, որոշեց քայլեր ձեռնարկել անցկացնելու խնդրո առարկայի շուրջ խորհրդարանական ընդհանուր քննարկումներ, արտգործնախարարության առջև բարձրացնել մոր լրացուցիչ հարցադրումներ:

Նույն տարվա սեպտեմբերին, սակայն, հանձնաժողովը միաժամանակ դադարեցրեց իր մտադրությունների իրագործումը, քանզի Գերմանիայի արտգործնախարարությունը նրան տեղեկացրեց այսպես կոչված հայ-թուրքական երկկողմ հաշտեցման հանձնաժողով ստեղծելու աշխատանքների մասին:

Գերմանիայում Հայոց ցեղասպանության հարցի խորհրդարանական ճանաչումը հետապնդող կազմակերպությունների և անհատ անձանց կարծիքով «հաշտեցման հանձնաժողով» հորջորդվածը փորձ էր որոշակի կանխարգելիչ դեր խաղալու խնդրի ճանաչմանն ուղղված դրական որոշումների կայացման գործընթացում: Այս առնչությամբ կարևոր է, որ Հայոց ցեղասպանությունը Բունդեսբաձում ընդունելու նախաձեռնող խմբի կարծիքը համընկավ հայ պատմագիտական ու քաղաքական մտքի ներկայացուցիչների

տեսակետին, քանզի ըստ էության հաշտեցման հանձնաժողովի նպատակն էր ազդել Եվրախորհրդարանում «ԵՄ-ին անդամակցելու Թուրքիայի առաջընթացի մասին» գեկուցող Ալեն Լամասուրի վրա, որով կհեշտանար ու կարագանար Թուրքիայի անդամակցությունը Եվրամիությանը: Դրանից հետո, ինչպես և ենթադրվում էր, օրակարգից հանվեց այն կետը, որով Հայոց ցեղասպանության ճանաչումը համարվում էր Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցելու նախապայման:

Նման պայմաններում ԳԴՀ Բունդեսբազի հայցադիմումների հանձնաժողովի խորհրդակցական մարմինը հոկտեմբերի 9-ին, «քննարկելով ԳԴՀ ԱԳՆ ներկայացրած պատասխանը, հաստատագրեց, որ ԱԳՆ-ից ստացված գրության մեջ հաշվի չի առնվել Գերմանիայի Բունդեսբազի որոշմամբ արտահայտված խնդրանքը: Ներկայացված հայցադիմումի խորհրդարանական գործընթացն այս հաստատագրմամբ համարվում է որպես ավարտված», - ասված է հոկտեմբերի 10-ին հայցադիմումների հանձնաժողովի հրապարակած տեղեկատվության մեջ: Այսպիսով, հայցադիմումների խորհրդարանական հանձնաժողովին չբավարարեց Գերմանիայի ԱԳՆ պատասխանը, որովհետև հաշտեցման հանձնաժողովի աշխատանքը չէր առնչվում Բունդեսբազի պաշտոնական լուսնների հետ, թեկուզև այն պատճառով, որ հաշտեցման հանձնաժողովը հանդես էր գալիս հասարակական կազմակերպության թիկնոցի ներքո:

Տեսնելով հայցադիմումը ներկայացնողների անբավարարվածությունը՝ հայցադիմումների հանձնաժողովի պաշտոնատարներից ոմանք նախաձեռնող խմբին առաջարկեցին պատրաստել նոր հայցադիմում՝ որպես առաջինի շարունակություն, ուր ներկայացված կլինեն պարզաբանումներ ու մանրամասներ «հաշտեցման հանձնաժողովի» գործունեության նպատակների և կարգավիճակի մասին:

Ընդսին՝ ճիշտ չէ երբեմն-երբեմն շրջանառության մեջ դրվող այն ձևակերպումը, թե ԳԴՀ Բունդեսբազն այսպես կոչված «հաշտեցման հանձնաժողովի» ստեղծման կապակցությամբ մերժել կամ օրակարգից հանել էր Հայոց ցեղասպանության հարցի խորհրդարանական քննարկումը: Իրականում այն ժամանակ Հայոց ցեղասպանության հիմնահարցի քննարկումը Բունդեսբազում դեռևս խմորվում էր, ուստի և պաշտոնապես օրակարգի հարց չէր կարող դառնալ: Այդ մասին է վկայում այն, որ ի վերջո Բունդեսբազի ջանքերով հայցադիմումների հանձնաժողովի տեսակետը ներկայացվեց ԱԳՆ-ին՝ պատասխանի ակնկալիքով: Հետևապես, ցեղասպանության հարցը վերստին բարձրացվեց կառավարական մակարդակի և նորից դարձավ գերմանա-թուրքական միջպետական քննարկման առարկա:

Հայցադիմումների հանձնաժողովում անցկացված քննարկումների ընթացքում Գերմանիայում թուրքական դեսպանությունը մշտական հեռախոսակապի մեջ էր հանձնաժողովի հետ՝ նպատակ ունենալով կանխել Թուրքիային ոչ ձեռնտու վճռի ընդունումը:

2001թ. հոկտեմբերի 8-ին նախաձեռնող կազմակերպությունները համատեղ մասնակ-հիմնավորումով դիմել էին Եվրոպական խորհրդարանում գերմանական պատվիրակության ղեկավար Ռոլֆ Բերենդիին՝ չեզոքացնելու «հաշտեցման հանձնաժողովի» դերակատարությունը, հորդորել գերմանական պատվիրակներին դեմ արտահայտվելու Թուրքիայի առաջընթացի հարցով համապատասխան հատվածին, հավատարիմ մնալ Եվրախորհրդարանի 1987թ. հունիսի 18-ի և 2000թ. նոյեմբերի 15-ի ընդունած որոշումների ոգուն, որը, ինչպես հայտնի է, դատապարտեց Հայոց ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում և փաստորեն հորդորեց Թուրքիային հաշտվել իր պատմական անցյալի ու հիշողության հետ և ճանաչել երիտթուրքերի ոճրագործությունները հայության նկատմամբ:

Այդ հանձնաժողովն ի վերջո ձախողվեց, մինչդեռ Գերմանիայում գործող նախաձեռնող խումբը շարունակեց իր հետևողական աշխատանքը, և նրա ջանքերով Բունդեսբազը վերստին անդրադարձավ Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին և ընդունեց համապատասխան որոշում: Բունդեսբազում Հայոց ցեղասպանությունը դատապարտող քանաձևի ընդունմանը նպաստեց մի հանգամանք ևս, որի պատճառով հիմնահարցը վկայախն վրավսց վկայմանական հասարակայնության ուշադրությունը:

2005թ. հունվարի 24-ին Գերմանիայում Հայոց ցեղասպանության հարցի բարձրագույն հիմնական պատճառն այն էր, որ Բրանդենբուրգի երկրամասի դպրոցական ձեռնարկներում չեղյալ համարվեց Հայոց ցեղասպանությանը վերաբերող հատվածը: Մինչ այդ Բրանդենբուրգի երկրամասի պատմության առարկայի ուսումնական ծրագրում դեռևս 2002թ. առաջին անգամ Գերմանիայում պաշտոնապես հիշատակվել էր Հայոց ցեղասպանությունը: Պատմության դասագրքում գրված էր հետևյալը. «Պատերազմի սանձազերծում: Բնաջնջում և ցեղասպանություն (հայ ժողովրդի ցեղասպանությունը Փոքր Ասիայում)»¹⁰: Դա բրանդենբուրգյան երկրամասի քաղաքական լուրջ քայլն էր՝ ուղղված Եվրամիությանը Թուրքիայի անդամակցությունը կասեցնելու գործընթացին¹¹: Դրան զուգահեռ՝ երկրամասային կրթության մախարարի կողմից պատմության բոլոր ուսուցիչներին հրահանգվել էր Հայոց ցեղասպանության մասին տրված հարցին որոշակիորեն պատասխանել, որ 1915-1916թթ. ցեղասպանությանը զոհ է գնացել 1,5 մլն հայ¹²:

Հարցի շոշափումը լրատվամիջոցների կողմից քաղաքական շարունակություն ստացավ այն բանից հետո, երբ Բունդեսբազի ընդդիմադիր ԲԴՄ/ԲՍՄ խմբակցությունը 2005 թ. փետրվարի 22-ին՝ «1915 թ. ապրիլի 24-ին հայերի տեղահանությունների և ջարդերի 90-րդ տարելիցի հիշատակի կապակցությամբ Գերմանիան պետք է իր օժանդակությունը բերի թուրքերի և հայերի հաշտեցմանը» վերնագրով հայցադիմում ներկայացրեց խորհրդարանի քննարկմանը:

ԲԴՄ/ԲՍՄ խմբակցության հայցադիմումն առարկայորեն նպաստեց, որ մախածեռնող խումբը, Բեռլինում ՀՀ դեսպանատունը, Գերմանիայի հայ համայնքը և գերմանական առաջադեմ հասարակական ու քաղաքական գործիչները Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի կապակցությամբ վճռակաճությամբ դատապարտեն երիտթուրքերի ոճրագործությունը: Օրինաչափ է, որ Բունդեսբազը Հայոց ցեղասպանության հարցին անդրադարձավ 90-րդ տարելիցի մախօրյակին:

Լրջագույն ելույթների ազդեցության տակ Բունդեսբազը հունիսի 16-ին իր օրակարգ մտքրեց հայերի կոտորածների վերաբերյալ քվեարկությունը: Առանց քննարկման Բունդեսբազը միաձայն քվեարկեց կուսակցությունների միասնական որոշման օգտին, որի վերնագրում բացակայում է ցեղասպանություն գիտաբառը: Սոցիալ-դեմոկրատական, քրիստոնեա-դեմոկրատական, քրիստոնեա-սոցիալական կուսակցությունների խմբակցությունների միասնական տեքստն ուներ հետևյալ վերնագիրը՝ «Հիշել և դատապարտել հայերի տեղահանությունն ու կոտորածները: Գերմանիան պետք է աջակցի Թուրքիայի և Հայաստանի հաշտեցմանը»¹³: Բունդեսբազի 2005թ. հունիսի 16-ի 188-րդ միստում ընդդիմության ներկայացուցիչ, կանցլերի թեկնածու, ներկայիս կանցլեր Անգելա Մերկելը ընդգծեց, որ «Թուրքիան պետք է հենց հիմա Հայաստանի ... հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատի»¹⁴: ԳԴՀ Բունդեսբազի բանաձևը խոշորագույն պատմաքաղաքական իրադարձություն էր հայ-գերմանական միջպետական առնչություններում, որը ամերկայորեն կնպաստի երկու երկրների և ժողովուրդների հարաբերությունների հետագա զարգացմանը:

Բունդեսբազն այս բանաձևն ընդունեց միաձայն, որը հազվադեպ է պատահում օրենսդիր մարմիններում: Հարկ է նշել, որ բանաձևում «ցեղասպանություն» բառը օգտագործված է ընդամենը մեկ անգամ. Գերմանիայի Բունդեսբազը փաստում է, որ «բազմաթիվ անկախ պատմաբաններ, խորհրդարաններ և միջազգային կազմակերպություններ հայերի տեղահանումն ու բնաջնջումը որակել են որպես ցեղասպանություն»¹⁵ (Völkermord - U. Iv.):

¹⁰ "Frankfurter Allgemeine Zeitung", 25.10.2005, Nr. 20, seite 33.

¹¹ Տե՛ս նույն տեղը, նաև՝ "Tages Zeitung", 26.1.2005, s. 1:

¹² Տե՛ս "De Brandenburgs beste Seiten", 08.07.2005:

¹³ «Օրեր», ամսագիր, Պրահա, 2005թ. հուլիս, էջ 5, www.orer.cr:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում:

Փաստաթղթում նշված է, որ Գերմանիայի կառավարությունը պետք է հորդորի Թուրքիային «հետաքննել կոտորածները և խթանել հաշտեցումը հայերի հետ»¹⁶: Փաստորեն Բունդեսքազի բանաձևում օգտագործվում են ինչպես «ցեղասպանություն», այնպես էլ «կոտորածներ» հասկացությունները: Եթե «ցեղասպանություն» բառը նշելիս Բունդեսքազը հենվում է անկախ պատմաբանների, տարբեր երկրների խորհրդարանների, միջազգային կազմակերպությունների համոզմունքի վրա, որը երիտթուրքերի հանցագործությունները որակում է որպես ցեղասպանություն, ապա նշված բանաձևի օգտին քվեարկողների կարծիքով և գնահատմամբ եղել են սարսափելի կոտորածներ, բնաջնջումներ, տեղահանումներ և բռնություններ, որոնք արժանի են խստագույնս դատապարտման:

«Պառլամենտը համոզված է, որ անհրաժեշտ է ազնիվ պատմական ուսումնասիրություն, որը հաշտեցման ամենակարևոր հիմքն է: Սա առանձնապես արդարացված է պատմությունը հիշելու եվրոպական մշակույթի ենթատեքստում, որը ներառում է նաև յուրաքանչյուր պետության պատմության մութ էջերի բաց քննարկում», - ասված է բանաձևում: Բանաձևը կոչ է անում ստեղծել թուրք, հայ և օտարերկրացի պատմաբաններից կազմված հանձնաժողով՝ կատարվածն ուսումնասիրելու համար: Հայ պատմագիտական և հասարակական-քաղաքական միտքը, ապա և դիվանագիտական խողովակները, անընդունելի և անիմաստ համարելով այն, կտրականապես մերժեցին: Բանաձևի նման կոչը կարծես հակասության մեջ էր մտնում նրա բովանդակության հետ, որովհետև մի կողմից ընդգծվում էր, որ երիտթուրքական ոճրագործության գոհ գնաց 1,5 մլն հայ, ընդունվում էր գերմանական Ռայխի մեղսակցությունը, իսկ մյուս կողմից առաջարկվում էր ստեղծել հանձնաժողով կատարվածն ուսումնասիրելու համար: Անիմաստ է ուսումնասիրել այն, ինչ վաղուց արդեն ուսումնասիրված է և ապացուցված: Հանձնաժողովի դատին հանձնելով Հայոց ցեղասպանության հարցի քննարկումը՝ դրանով իսկ կասկածի տակ է դրվում ամենի գոհերի հիշատակը, հեղինակագրկվում մեկ տասնյակից ավելի երկրների օրենսդիր մարմինների պաշտոնական որոշումները Մեծ եղեռնը ճանաչելու վերաբերյալ: Ինչ վերաբերում է հաշտեցման գործում Գերմանիայի պաշտոնական պատրաստակամությանը, ապա այն որոշ վերապահումով ընդունելի է, քանի որ Գերմանիան «աչք է փակել իր դաշնակցի (Օսմանյան Թուրքիայի - Ա. Խ.) գործողությունների վրա»: Բավականին արժեքավոր է Բունդեսքազի պատգամավորների կոչը Գերմանիայի ԱԳՆ-ին՝ բացելու այդ ժամանակաշրջանին վերաբերող արխիվը, որը, մեր համոզմամբ, անշուշտ մեկ անգամ ևս կապացուցի պատմական ճշմարտությունը Հայոց ցեղասպանության վերաբերյալ:

Բունդեսքազն իր որոշումով կոչ է անում Գերմանիայի կառավարությանը ազդել թուրքական կառավարության վրա, որպեսզի վերջինս ճանաչի եղելությունը և բնականոն հարաբերություններ հաստատի Հայաստանի հետ, վերացնի շրջափակումը, աջակցի խաղաղ ճանապարհով Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորմանը:

Ինչպես և սպասվում էր, Թուրքիան խիստ թշնամաբար ընդունեց Բունդեսքազի բանաձևը: Այդ է վկայում 2005թ. հունիսի 17-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարարության տարածած դատապարտող հայտարարությունը Գերմանիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանաձևի ընդունման կապակցությամբ: Հայտարարության մեջ ընդգծվում էր, որ այն պետությունը, որին «մենք միշտ բարեկամ ու դաշնակից ենք համարել, խորապես վիրավորում է թուրք ժողովրդին: Մենք ցանկանում ենք ընդգծել, որ այդ քայլը բացասական հետևանքներ կունենա մեր հարաբերությունների վրա»¹⁷:

Թուրքիայի վարչապետ Էրդողանն այդ առիթով ասել է, որ բանաձևը չի դրվի Գերմանիայի Բունդեսքազի քվեարկությանը, քանի որ մինչ այդ 2005թ. մայիսի 4-ին կանցլեր

¹⁶ ADK, Nr. 127/128 Fg. 2005/Heft 1&2, seite 4-12:

¹⁷ «Հայկական ժամանակ», 16 իունիսի 2005թ..

Գերհարդ Շրյոդերը կոչ էր արել հայերին ընդունել ցեղասպանության խնդիրը պատմա-բանների կողմից ուսումնասիրելու մասին իր առաջարկությունը¹⁸։ Կանցլերի կոչն ուղղված էր հայերին, մինչդեռ բանաձևի ընդունման գործում հայերը կարող էին նվազագույն ազդեցություն ունենալ։ Վճռորոշ էր Գերմանիայում գործող ազդեցիկ քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, Բունդեսբազի պատգամավորների դերը, նրանց դիրքորոշումը։ ԳՂՀ-ն ժողովրդավարական դասական երկիր է, որը մեկ անգամ ևս ապացուցվեց Բունդեսբազի նիստում Հայոց ցեղասպանության հարցը քննարկելու ժամանակ։

Բունդեսբազի որոշումը այնքան էր վրդովեցրել Թուրքիայի վարչապետին, որ նա իր գերմանացի գործընկերոջ հասցեին քայլ էր տվել վիրավորական արտահայտություն՝ անվանելով նրան «անողնաշար», չնայած կանցլերի խիստ բարեկամական վերաբերմունքին թե՛ Թուրքիայի և թե՛ այդ երկրի վարչապետի նկատմամբ։ Այս անպարկեշտ, դիվանագիտության բնագավառում մերժելի փաստը մեկ անգամ ևս ապացուցեց, թե որքան թշնամաբար է տրամադրված պաշտոնական Թուրքիան Հայոց ցեղասպանության ճանաչմանը։

Հայոց ցեղասպանության վերաբերյալ Բունդեսբազի ընդունած բանաձևի կապակցությամբ Գերմանիայի կառավարության խոսնակ Թոմաս Շտեգը, անդրադառնալով Թուրքիայի իշխանությունների հակազդեցությանը, ասել է, որ այդ երկրի վարչապետ Ռեջեփ Թայյիփ Էրդողանի կողմից բանաձևին տրված «սխալ և տգեղ» բնորոշումը լրջագույն բացթողում է, քանի որ որոշումը հավասարակշռված բնույթ է կրում¹⁹։

Իր հերթին ՀՀ -ն պաշտոնապես արձագանքեց և տվեց իր գնահատականը Բունդեսբազի ընդունած բանաձևի վերաբերյալ։ ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի դիտարկմամբ՝ «Հայաստանը դրական է գնահատում Բունդեսբազի ընդունած բանաձևը։ Այն կարևոր քայլ է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ։ Թեև բանաձևում չի օգտագործվում «ցեղասպանություն» տերմինը, քանի որ Բունդեսբազն իրեն իրավասություն չի վերապահում որակավորում տալ 1915թ. դեպքերին, սակայն «ցեղասպանություն» բառը առկա է նկարագրական մասում, իսկ որոշման մասում այդ ողբերգական իրադարձությունների վերաբերյալ կիրառվում է «հայոց բնաջնջում» տերմինը։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գերմանիան տարիներ շարունակ խուսափում էր խոսել այդ մասին և ավելի շուտ հակված էր լռության կամ ժխտման, Բունդեսբազի որոշումը շրջադարձային է»²⁰։

Այսպիսով, թեև Բունդեսբազի ընդունած բանաձևում միայն մեկ անգամ է հիշատակվում «ցեղասպանություն» բառը, այնուհանդերձ այն չի նվազեցնում բանաձևի պատմաքաղաքական ու իրավական նշանակությունը։ Իհարկե, հայ հասարակայնությանը ցանկալի կլինեք բանաձևի մեջ տեսնել պատմական իրականությունն արտացոլող հստակ մտեցումներ, որոնց բացակայությունը, սակայն, չի կարող հիմք դառնալ վերջինիս բովանդակությունը թերագնահատելու համար։ Միջազգային հարաբերությունների ողջ պատմությունը վաղուց արդեն աներկբայորեն ապացուցել է, որ քաղաքականությունը և դիվանագիտությունը հնարավորինի մասին արվեստ է, ուստի Բունդեսբազի բանաձևն արտացոլում է հնարավորինը, և այդ կարևոր իրողությունը պետք է նկատի ունենալ ու բանաձևը գնահատել որպես լուրջ քայլ Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական տեսանկյունից լիարժեք ճանաչելու համար, ինչպես դա կատարեց Ֆրանսիան՝ նրա օրենսդիր մարմինը՝ երկու պալատներով հանդերձ, և վավերացրեց երկրի նախագահ Ժ. Շիրակը։ Բունդեսբազի բանաձևն, իսկապես, պատմաքաղաքական, միջազգային-իրավական կարևորագույն փաստաթուղթ է, քանզի այն հիմնովին ժխտում է անմեղ զոհի ու արյունարբու դահիճի միջև հավասարության նշան դնելու միտումը, որին ձգտում էր և այժմ էլ շարունակում է ձգտել ցեղասպան պետությունը։ Այսօր քաղաքագետների, դիվանագետների, պետական այրերի առաջնահերթ ու հրատապ խնդիրն է հակահարված հասցնել

¹⁸ Տե՛ս նույն տեղը։

¹⁹ «Հայաստանի Հանրապետություն», 18 հունիսի 2005թ.։

²⁰ Նույն տեղում։

մման բացահայտ հակապատմական, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին լիովին խորթ ու հակասող Թուրքիայի ու նրա զարգացող երկրներին ձգտումներին:

«Հայոց ցեղասպանության ընթացքում երիտթուրքերի ոճրագործությունները, համադրելով ֆաշիստների հանցագործությունների հետ ուղղված հրեաների, սլավոնների, զնչուների և այլ ազգերի ու ազգագրական խմբերի դեմ եզրակացությունը աներկբայորեն միանշանակ է՝ երիտթուրքերը և ֆաշիստները երկվորյակներ են, ոճրագործություններն ընդհանուր են, քանզի երկու դեպքում էլ կատարվել է համամարդկային բնույթի հանցագործություն, ուստի նրանց կազմակերպիչների ու պարագլուխների պատժելիության համար չկա վաղեմության ժամկետ»²¹:

Սակայն, եթե ԳԴՀ-ն, ընդունելով և դատապարտելով ֆաշիստների հանցագործությունները, ոչ միայն չհեղինակարկվեց միջազգային ասպարեզում, այլև զգալիորեն ամրապնդեց իր դիրքերը, վստահություն նվաճեց Եվրոպայում ու ողջ աշխարհում, ապա նույնը չի կարելի ասել ներկայիս Թուրքիայի մասին, որի պարագլուխները շարունակում են երգել հնացած երգը, փորձում «ապացուցել» անապացուցելին:

Դժբախտաբար Հայոց ցեղասպանությունը՝ պատմական բացարձակ և անվիճելի ճշմարտությունը, ցայսօր պաշտոնապես ճանաչել է միայն 17 պետություն, այն էլ տարբեր մակարդակներով: Այդ պետությունների բարձրագույն օրենսդիր մարմինները ելակետ ունեն պատմական իսկությունը և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերը, իսկ առանձին երկրներում մման դատապարտող բանաձևի ընդունումը դեռևս քննարկվում է պաշտոնական վավերագրերի ուսումնասիրության առումով, միջազգային իրավունքի մեկնաբանության տեսանկյունից:

ԳԴՀ Բունդեսբազի կողմից Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունումը կարևորվում է բազում առարկայական գործոններով, որոնցից ամենագլխավորն այն է, որ Օսմանյան կայսրությունն Առաջին աշխարհամարտի տարիներին եղել է կայսերական Գերմանիայի հիմնական դաշնակիցը, մինչդեռ Հայոց ցեղասպանությունը ճանաչած Ֆրանսիան և Ռուսաստանը պատերազմում էին Օսմանյան Թուրքիայի և կայսերական Գերմանիայի դեմ: Ավելին, 1915թ. մայիսի 11-ին (24-ին) Ռուսաստանը և Ֆրանսիան Անգլիայի հետ միասին Հայոց ցեղասպանության առիթով հանդես եկան հատուկ հայտարարությամբ, որի մեջ նշված է հետևյալը. «Թուրքիայի պաշտոնական անձինք, չբացառելով նաև նախարարներին, կկրեն արժանի պատիժ իշխանության չարաշահման համար և այն ջարդի համար, որ նրանք ենթարկում են հայ բնակչությանը»²²: Հետևաբար, ժամանակակից Ռուսաստանը և Ֆրանսիան որպես իրենց նախորդած իշխանությունների իրավահաջորդ ու իրավաժառանգ ունեին Օսմանյան կայսրության պարագլուխների ոճրագործությունները դատապարտող պաշտոնական վավերագիր, որպիսին, հասկանալի պատճառով, չունեն Գերմանիան: Այս առումով անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ԳԴՀ Բունդեսբազի՝ երիտթուրքերի ոճրագործությունը դատապարտող բանաձևին:

Բունդեսբազի՝ Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունումը նպաստեց Բեռլինի-Բրանդենբուրգի դատարանի վճռին, որի համաձայն թուրքերն իրավունք չունեն օգտագործելու 1915թ. Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանությունը ժխտող պաստառներ: Այդ դատավճիռը կայացվեց թուրքերի՝ այսպես կոչված «Թալեաթ փաշայի արշավը» կազմակերպելու որոշման կապակցությամբ: Ըստ թուրքական «Ջաման» թերթի, Բեռլինի գերագույն վարչական դատարանը թուրքերին թույլատրել էր 2006թ. մարտի 18-ին անցկացնել նախօրոք ծրագրած «Թալեաթ փաշայի արշավն» այն պայմանով, որ երթի ժամանակ չցուցադրվեն Հայոց ցեղասպանությունը մերժող պաստառներ և

²¹ Մ. Ա. Մուրադյան, Հայկական հարցը և ռուսական հասարակական-քաղաքական ու պատմագիտական միտքը. Եր., 1998, էջ 7:

²² Նույն տեղում, էջ 7-8:

հանդես չգան հերքող ելույթներով: Ըստ թերթի, դատարանի ընդունած որոշման մեջ ասված է. «Հայոց ցեղասպանության հերքումը հավասարազոր է նահատակների հիշատակը սևացնելն արգելող Գերմանիայի սահմանադրության 189-րդ հոդվածի ոտնահարման»²³: Այդ արշավը վկայում է, որ թուրքերը չեն հրաժարվում հայության հանդեպ Թալեաթի ոճրագործությունից, այլապես չէին կազմակերպի նման միջոցառում՝ նվիրված համաշխարհային մասշտաբի հանցագործին:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանության բանաձևի ընդունումն անշուշտ կնպաստի հայ-գերմանական միջպետական հարաբերությունների համակողմանի զարգացման գործընթացին:

А. В. ХАЧАТУРЯН - Критический анализ резолюции Бундестага ФРГ о Геноциде армян. - В ходе и после первой мировой войны, с 1915 по 1923гг., младотурки организовали Геноцид армян, жертвами которого стали 1,5 млн. человек. Этот факт признан РФ, Францией, Грецией и многими другими странами мира. Геноцид армян стоял в центре внимания также и в ФРГ.

По инициативе 5 влиятельных организаций 16-го июня 2005г. в порядок дня Бундестага ФРГ был внесен вопрос о резне армян: "Помнить и осудить депортацию и погром армян. Германия должна способствовать примирению Турции и Армении". Эта резолюция была принята единогласно.

В резолюции Бундестага слово "геноцид" было употреблено только один раз, однако это отнюдь не умаляет значение принятой резолюции с точки зрения международного права. Бундестаг ФРГ признает и констатирует, что "многие историки, парламенты и международные организации депортацию и погром армян квалифицировали как Геноцид". По словам главы МИДа Армении В. Осканяна, "это имеет большое значение. Ведь Германия раньше вообще отказывалась даже говорить о нём. Решение Бундестага есть резкий поворот к лучшему".

Германия прямо или косвенно способствовала осуществлению Геноцида армян, поскольку Турция была ее главной союзницей.

Принятие резолюции о Геноциде армян со стороны ФРГ, безусловно, будет способствовать всестороннему развитию армяно-германских межгосударственных отношений.

²³ «Ազգ», 16 մարտի 2006թ..